Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝	ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Թեմա՝	Հարադիր բայերի ուսուցումը և դրա արդյունավետության բարձրացումը 7-րդ դասարանում
Վերապատրաստող, մենթոր՝	Նարինե Բաղդասարյան
Կատարող՝	Մարինե Վիրաբյան

Վանաձոր 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
2. ՀԱՐԱԴԻՐ ԲԱՅԵՐ/ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ/	9
3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ : ՀԱՐԱԴԻՐ ԲԱՅԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ	13
4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	18
5. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայերենի խոսքի մասերի մեջ բայը առանձնահատուկ տեղ է գրավում։ Այն ամենաբարդ խոսքի մասն է և՛ իր լեզվական- քերականական կարգերով, ժամանակի ընթացքում կրած բազմատեսակ կերպարանափոխություններով, ձևաբանական կառուցվածքով, և՛ տարբեր խոսքի մասերի հետ ունեցած կապերով և՛ հարաբերություններով։ Ուսումնասիրության մի առանձին բաժին է բայերի դասակարգումը ըստ կազմության բնույթի և մասնավորապես ըստ բաղադրիչների կապի բնույթի ։ Ըստ այդմ բայերը լինում են **համադրական և հարադրական**։

Համադրական կոչվում են այն բայերը, որոնց բաղադրիչները միաձույլ են։

Հարադիր բայերը թեև մեկ բառային միավոր են, մեկ բառի արժեք ունեն, սակայն կազմվում են տարբեր միավորների հարադրումից, այսինքն՝ նրանց բաղադրիչները միաձույլ չեն, ինչպես՝ ձայն տալ, լաց լինել, վեր կենալ, պար գալ, թույլ տալ, մեջ ընկնել և այլն։

Հարադիր բայերը հայերենին առանձնապես հատուկ, հայերենի համակարգում համադրականներից ոչ նվազ լեզվական-քերականական դեր ու արժեք ունեցող բայական միավորներ են և կազմում են նրա մի շատ կարևոր ու բաղկացուցիչ մասը։ Նրանց ուսումնասիրությունը գիտական մեծ կարևորություն ու հետաքրքրություն է ներկայացնում ինչպես լեզվաբանության, այնպես էլ նրա մասը կազմող բառագիտության խնդիրների լուծման ու պարզաբանման տեսակետից։ Մեր լեզվի բառապաշարի հարստացման տարբեր եղանակներից ու միջոցներից են հենց բառահարադրությունները։ Բառակազմական տեսակետից հարադրությունը պարզունակ ու հասարակ է, քան համադրական կազմություններն են, այն չի կենտրոնացել լեզվի պատմության մեր շրջանում, այլ ուղեկցել է բոլոր շրջաններին և գործում է ցայսօր։ Արձանագրելով հարադրական բառակազմության գործադրման փաստը հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններում ու բարբառներում՝ Ա. Աբրահամյանը նշում է նրա պրիմիտիվությունը համադրական կամ միաձույլ բառակազմության համեմատությամբ»[1]։ Նա նշում է, որ որոշ բայեր գործածվում են միայն հարադրությամբ, գոնե ըստ գրավոր տվյալների՝ այդ շրջանում դրանք զուգահեռ համադրական միավորներ չեն ունեցել, սակայն այդ շրջանից հետո երևան

են գալիս նաև համադրական միավորներով։ Օրինակ՝ մեր մատենագրության մեջ մեսրոպյան շրջանից չկա «պատասխանել» բայը, նրա փոխարեն գործածվել եմ հարադրություններ «պատասխան տալ»։

Կարող է լինել և հակառակ երևույթը, երբ համադրական միավորները իրենց գոյությամբ նախորդում են հարադրություններին. օրինակ՝ բանալ-բաց անել, լալ-լաց լինել, կանգնել-կանգ առնել և այլն։

Անդրադառնալով հարադիր բայերի բառակազմական արժեքին՝ Ա. Մարգարյանը այդ տեսանկյունից հարադիր բայեր է անվանում այն բարդությունները, որոնք կազմված են կամ որևէ հարադրից (իսկ դա, անկախ վերցրած, կարող է լինել գոյական, ածական,դերանուն, մակբայ, ձայնարկություն, բայարմատ և այլն) և որևէ բայից, կամ զուտ բայական միավորներից հարադրության հիմունքով կազմված բարդությունները, որոնք արտահայտում են իրեն բաղադրիչներից տարբեր ու մի նոր նշանակություն։Իրարից չեն տարբերվում ո՛չ հարադրից ու բայից, ո՛չ առանձին բայերից, ո՛չ էլ անորոշից ու տալ բայից կազմված բայերը կամ ձևերը։ Օրինակ՝ գլուխ ջարդել, երես առնել, դուրս գալ, դուր գալ, անցնել-գնալ, գալ-տեսնել, գլուխ տալ, առնել տալ, կոտրել տալ, պատրաստել տալ և այլն։ Այսպիսի բայերը հայ լեզվաբանության մեջ անվանում են բաղադրյալ, հարադրյալ, հարադրական, հարադիր կամ վերլուծական բայեր, որոնք ըստ էության, արտահայտում են միևնույն իմաստը կամ նշանակությունը։ Այնուամենայնիվ, բայական հարադրավոր բարդությունները իրարից տարբերվում են թե՛ բաղադրիչների բնույթով, թե՛ ձևաբանական կառուցվածքի տեսակետից, թե՛ արտահայտած ընդհանուր իմաստով և թե՛ բովանդակությամբ, և թե՛ իրենց դերով և նշանակությամբ։

Աշխարհաբարի բայական հարադրությունները ժամանակին արժանացել են ուսումնասիրողների ուշադրությանը։Դրանք բավականաչափ ուսումնասիրված են հատկապես բառակազմական տեսակետից։

Հայերենի հարադրավոր բայերի գիտական խոր լուսաբանությունը փաստորեն սկսվում է այն ժամանակվանից, երբ հայ լեզվաբանության մեջ ասպարեզ է գալիս

Մ.Աբեղյանը։Ամենից առաջ արձանագրելով ու շեշտելով,որ հարադրական բայերը առանձնապես հատուկ են հայոց լեզվին,Մ.Աբեղյանը գիտականորեն հիմնավորել և ցույց է տվել,որ նրանք բայից և հարադրից կազմված բարդություններն են,որտեղ «բայն ու հարադիրը միասին ստանում են մեկ բառի նշանակություն»և ըմբռնվում «իբրև մի միություն և մեկ բառ» [1.1]: Մ.Աբեղյանը բարդության մի առանձին տեսակ է համարում հարադիր բայերը և իր վաղ շրջանի աշխատություններում կոչում հարադրյալ,իսկ «Հայոց լեզվի տեսության»մեջ՝ հարդրական բայեր։

Մ.Աբեղյանը ոչ միայն ամբողջ բարդության էությունն է պարզել, այլև տարբերվել է հարադրական բայերն ըստ տեսակների և դրան համապատասխան ցույց տվել,թե ինչպիսի հարադիրներով ինչ բայեր են կազմվում։Կան բազմաթիվ հարադրական բայեր,որոնք իրենց հարադիր մասի հետ սկզբնապես եղել են մտածության առանձին շուռ տված ձևեր։ Հարադրավոր բայերի բառային առանձնահատկություններից և ամբողջական բառ լինելու ապացույցներից մեկն էլ այն է, որ նրանց բաղադրիչները ոչ միայն կայուն ու հաստատուն տեղ ունեն բարդության մեջ, այլև հանդես են բերում իրենց բնույթին համապատասխանող ու դրանից բխող հատկություններ։

Այսպես՝ հարադրավոր բայերի մեջ առաջին բաղադրիչը՝ հարադիրը, միշտ էլ գործածվում է անփոփոխ տեսքով, քանի որ եթե հարադիր դառնալուց առաջ նա առանձին ու ինքնուրույն բառ է՝ օժտված ինքնուրույն բառային հատկություններով, ապա բարդության մեջ այլևսինքնուրույն ու անկախ բառ չէ, չունի ինքնուրույն ու անկախ բառի ո՛չ իրավունքներ, ո՛չ էլ հատկություններ և պարզապես հանդես է գալիս իբրև բայական բարդության բաղադրիչ։

Հարադրով ու բայով ձևերի բառային ամփոփ միավոր լինելու մի այլ կարևոր ապացույցն էլ նրանց մի ընդհանուր բառային շեշտ ունենալն է։ Այս մասին առաջինը խոսում է Մ. Աբեղյանը և նշում, որ միավանկ բաղադրիչներ ունեցող «հարադրյալ բայերի մեջ, որոնք կազմում են մի բառական միություն, շեշտվում է միշտ նախադաս հարադիրը, ինչպես՝ ցու՛յց տալ, թա՛փ տալ, մա՛ն գալ, ե՛փ գալ և այլն» [2]:

Քննելով հարադիր բայերի բաղադրիչների ներքին կապն ու շարահյուսական հարաբերությունը՝ պարզ է, որ թե հարադրավոր բայերի բայական բաղադրիչները միատարր են, այսինքն՝ զուտ բայ են և այդպիսին են թե՛ բարդության մեջ և թե՛

բարդությունից դուրս, ապա հարադիրներն, ընդհակառակը, բազմատարր են, այսինքն՝ գոյական են, ածական, դերանուն, մակբայ, կապ, ձայնարկություն նաև՝ բայարմատ կամ որևէ ձևույթ, որոնք, բարդության մեջ զրկվելով իրենց բուն խոսքի մասային նշանակությունից, հանդես են գալիս սոսկ իբրև նրա բաղադրիչ։Թեման արդյունավետ ուսուցանելու նպատակով անհրաժեշտ է այն կազմակերպել այնպես, որ սովորողը, կրթության և ուսումնառության օբյեկտ լինելուց բացի, դառնա նաև սուբյեկտ ու անմիջական մասնակից, ով ուսումնառության գործընթացին կվերաբերվի ավելի մեծ պատասխանատվությամբ, կդրսևորի ստեղծագործելու և հետազոտելու կամք և ցանկություն։

Ցանկացած խելամտորեն կառուցած ուսուցում, ինչպես նշում է Լ. Վիգոտսկին, այս կամ այն աստիճանով օժանդակում է անձի մտածողության զարգացմանը: Ուսումնական գործունեության օգնությամբ սովորողները մոդելավորում և ուսումնասիրում են ելակետային հարաբերությունները, որոնց վրա հենված կողմնորոշումը մնացած բոլոր խնդիրների լուծման համընդհանուր հիմքն է:

«Տեսական գիտելիքների յուրացման ընթացքում զարգացման պայմաններ են առաջանում հենց այդ մտածական գործողությունների մեջ՝ որպես տեսական մտածողության կարևորագույն բաղադրիչների[3]»:

Ուսումնական գործունեության կրողը նրա անձն է (սուբյեկտը): Այդ դեպքում դպրոցականն ուրիշների հետ և ուսուցչի օգնությամբ իրագործում է սեփական ուսումնական գործունեությունը: Անձի զարգացումը տեղի է ունենում հենց իր կայացման գործընթացում՝ տարրական դասարաններից սկսած, երբ դպրոցականն աստիճանաբար վերածվում է սովորողի, որը փոխում և կատարելագործում է ինքն իրեն: Ուսուցման գործընթացում անհրաժեշտաբար գտնվում են ուսումնական գործունեության նոր ձևեր ու մեթոդներ, որոնք զարգացնում են սովորողների լեզվամտածողությունը, խոսքային կարողությունը, ձևավորում են իմացական կայուն կառույցներ:

«Ինտերակտիվ» բառը թարգմանաբար նշանակում է «համագործուն դաս կամ միջգործունեություն»: Ինտերակտիվ դասի օրինակներ կարող են լինել դասարանական ակտիվ քննարկումը, բանավեճը, խաղը: Նմանօրինակ դասերը

սովորողների մոտ ստեղծում են մոտիվացիա՝ ցանկություն առաջացնելով ընթերցելու, լսելու, հասկանալու և խոսելու համար: Բազմաթիվ լեզվական համագործուն ուսումնական խաղերը նպաստում են սովորողի բառապաշարի ընդլայնմանը, զարգացմանը, նորացմանը: Բանավիճային դասերը թույլ են տալիս սովորողներին ձերբազատվել բարդույթներից, փորձել ձևակերպել միտքը, կարծիքը, տեսակետը: Նման դասերի ընթացքում դասավանդողը հնարավորինս քիչ է միջամտում, հանդես է գալիս որպես ուղղորդող: Ուղղումներ անում է միայն շատ կոպիտ լեզվական կամ քերականական վրիպումների դեպքում:

Ինտերակտիվ դասն այնպիսի դաս է, ուր ապահովվում է ուսուցիչ-սովորող սերտ համագործակցություն: Դասավանդողը հիմնականում հանդես է գալիս որպես կրթական գործընթացի կազմակերպող, իսկ սովորողը պետք է լինի այդ գործընթացի կենտրոնում, շահագրգռված լինի գործընթացով և ակտիվ մասնակցություն ունենա: Դասը պետք է այնպես կառուցված լինի, որ հնարավոր լինի ներգրավել դասարանի բոլոր սովորողներին՝ յուրաքանչյուրին ըստ հնարավորությունների: Նման դասերը շատ հարմար և կիրառելի են դառնում այնպիսի դասարաններում, որտեղ սովորողների լեզվական իմացությունը տարբեր մակարդակների է, այսպես կոչված՝ «խառը դասարաններում»:

Դասավանդողը դասը կառուցելիս հաշվի է առնում այնպիսի առաջադրանքներ և գործունեության ձևեր, որ մասնակցեն բոլորը: Ինտերակտիվ դասի շնորհիվ տեղի է ունենում մտքերի և տեղեկությունների փոխանակում, քննարկում, փնտրում և բացահայտում, ինչը նպաստում է անընդհատ կատարելագործմանը, ինչպես սովորողի, այնպես էլ՝ դասավանդողի դեպքում:

Հետազոտության նպատակը՝

Հաշվի առնելով ուսուցման ինտերակտիվ մեթոդների հնարավորությունները՝

ա/դիտարկել բայական հարադրությունների ուսուցման առանձնահատկությունները՝ փոխներգործման եղանակով:

բ/ Ցույց տալ, որ ուսուցման ինտերակտիվ մեթոդները նպաստում են ժամանակի տնտեսմանը, դասավանդողի և սովորողի ստեղծագործական ներուժի բացահայտմանը, տեսակետը արտահայտելու և հիմնավորելու հնարավորությանը, ինքնուրույն մտածելու և մտքերն անկաշկանդ արտահայտելու հմտությունների զարգացմանը:

Հետազոտության խնդիրները՝

ա/ Տեսական ու գործնական ի՞նչ մոտեցումներ են առկա թեմայի վերաբերյալ:

բ/ Ինչպե՞ս ամրապնդել և կիրառել ուսուցման ինտերակտիվ մեթոդների միջոցով ձեռք բերված գիտելիքները:

գ/ Ինչպե՞ս զարգացնել հետազոտական և քննադատական կարողությունները՝ կիրառելով միջառարկայական կապերը՝ որպես թեմայի ուսուցման միջոց :

Հետազոտության արդիականությունը՝

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով: Այս պահանջներին բավարարում է ուսուցման փոխներգործման կամ ինտերակտիվ մեթոդների կիրառումը, որն արդիական է նույնիսկ քերականական նյութի ուսուցման ժամանակ:

ՀԱՐԱԴԻՐ ԲԱՅԵՐ

Հարադրական են այն բարդությունները, որոնք կազմված են մեկից ավելի բաղադրիչներից և գրվում են անջատաբար: Դրանք ծագում են սովորական շարահյուսական կապակցություններից: Դարավոր գործածության շնորհիվ բաղադրիչների կապակցությունների քերականական- շարահյուսական և իմաստային նախկին հարաբերությունները մթագնում են կամ կորչում և առաջ են գալիս նոր իմաստներ ու հարաբերություններ:

Հարադրությունների էական առանձնահատկությունն այն է, որ կազմված լինելով երկու, երբեմն ավելի բաղադրիչներից՝ բարդությունն ամբողջությամբ արտահայտում է ավելի հարուստ իմաստ, քան բաղադրիչներն առանձին-առանձին և իր բոլոր բաղադրիչներով դիտվում է որպես մեկ բառային միավոր [4]:

Հարադրությունները լինում են անվանական և բայական:

Անվանական հարադրական բարդություններ են կոչվում որևէ անուն խոսքի մասի պատկանող տարբեր բառերի հարադրությամբ կազմված բարդությունները [5]: Գուրգեն Մահարին իր «Ծաղկած փշալարերը» վիպակում մեծ հակում է դրսևորել հարադրության տարբեր տեսակների կիրառությունների նկատմամբ: Կանդրադառնանք հարադրությունների տեսակներին և դրանց կիրառություններին Գ. Մահարու նշված ստեղծագործության մեջ:

Անվանական հարադրական բարդություններ կարող են կազմվել նյութական իմաստ արտահայտող գրեթե բոլոր խոսքի մասերով, հատկապես այնպիսի բառերով, որոնք իրար հետ կապված են ինչ–ինչ կողմերով և իրար հետ առնչվող երևույթներ, իրողություններ և հատկանիշներ են ցույց տալիս: Անվանական հարադրություններ կարող են կազմվել հոմանիշ, հականիշ և իրար հետ իմաստով առնչակից բառերով, ինչպես՝ աղմուկ-աղաղակ, կոշտ-կոպիտ, բուք-բորան (հոմ.), գիշեր-ցերեկ, ներս-դուրս, հեռու-մոտիկ (հակ.) թև-թիկունք, աչք-ունք, տուն-տեղ, քիթ-մռութ, դուռ-դրկից, հինգ-վեց, զենք-զրահ և այլն:

Հարադրական բարդություններ են կազմվում գոյականների ինչպես ուղիղ, այնպես և թեք հոլովաձևերով, ինչպես՝ **աղմուկ-աղաղակ, բուք-բորան, արյուն-քրտինք, աչքով-ունքով, տնով-տեղով, տնից-տեղից, ոտով-գլխով, սարեր-ձորեր, երգի-պարի, հորով-մորով** և այլն, որակական և հարաբերական ածականների հարադրությամբ, ինչպես՝ **անթիվ-անհամար, կիսատ-պռատ, լուռ ու մունջ, ծանր ու թեթև, հեռու-մոտիկ, անտես-աննման, հրեղեն-փարեղեն, անձնական-ընտանեկան** և այլն:

Հարադրական բարդություններ են կազմվում նաև թվականների, մակբայների, մասամբ նաև շաղկապների և եղանակավորող բառերի հարադրությամբ, ինչպես՝ երկու-երեք, հազար ու մեկ, ետ ու առաջ, դես ու դեն, վեր ու վար, ապա թե ոչ, միայն թե, կարծես թե, ինչպես որ, ասես թե, մանավանդ որ և այլն:

Բայական հարադրությունները կազմվում են որևէ գոյականով, մակբայով և մեկ բայի կապակցությամբ, ինչպես նաև երկու բայերի զուգադրությամբ, որոնք ունեն բառային առանձին իմաստ և մեկ ընդհանուր շեշտ:

Բայական հարադրությունները հիմնականում բաժանվում են երեք խմբի [6].

ա) Բարդություններ, որոնք կազմված են որևէ հարադրից (գոյական կամ մակբայ) ու բայից և ըմբռնվում են որպես գործողության ընդհանուր նշանակություն արտահայտող ինքնուրույն բայական միավորներ, ինչպես՝ միտք անել, գլխի ընկնել, դուրս տալ, հանդես բերել, կանգ առնել և այլն: Այս կարգի բարդությունները կոչվում են հարադիր բայեր:

Դիտարկենքօրինակներ. [7]

1. Մամոյին և ամենամեծաստիճանավորին, երբ **հարց էինտալիս**, և նապատասխանում էր իր դժվար ռուսերենով, ժպտալ, երբ պտտվում էր անիվն ու ձևավորում բարակ մատներով հողեամանները, ժպտալանառիթ, իր մտքերին ու հիշողություններին: (13-14)
2. Ունա**դուրսեկավ**առանցսպասելուպատասխանի: (14)
3. Նա, ըստերևույթին, գերմանուհուն ինչ-որ բան էր բացատրում կամ գուցե պատմում՝ **գործի դնելով** իր ռուսերենի ողջ բառապաշարը: (18)
4. Նա անհանգստացավ և մի քանի անգամ **շուռ եկավ**: (23)

5. Ապա մյուս գրպանից **դուրս քաշեց** իսկական սոխի մի փոքրիկ, կարելի է ասել՝ թարմ գլուխ...: (24)

6. Գերմանուհին շարժվեց տեղից և **ոտքի կանգնեց**: (24)

7. Այդ հնգյակը **կարգի բերեք** դատարկված երկու բարաքները...: (27)

8. Վերջապես հասավ ցանկալի պահը. կրունկների վրա բացվեցին դարպասները, և քնքուշ սեռի էտապը **ներս մտավ:** (28)

9. ...Ալլահի կամքով **սեր էր անում** նկարիչ-քանդակագործուհի Լյուդմիլա Շարթի հետ: (36)

10. Ես չեմ ուզում **անձնատուր լինել** երևակայությանը: (38)

բ) Բարդություններ, որոնք կազմված են երկու և ավելի բայերից և արտահայտում են իրար հետ սերտորեն կապված գործողություններ մի ընդհանուր նշանակությամբ և կոչվում են զուգադրական բայեր, ինչպես՝ բռնել-բերել, ելնել-կանգնել, ուտել-խմել և այլն:

գ) Բարդություններ, որոնք կազմված են անորոշ դերբայից և տալ բայից և միասնաբար արտահայտում են պատճառականություն: Այսպես են կազմվում պատճառական ձևերի այն բայերը, որոնք սովորաբար պատճառական ածանցներ չեն ստանում, ինչպես՝ ազատել տալ, բերել տալ, գողանալ տալ, փորել տալ և այլն: Այս խմբի բարդությունները կոչվում են պատճառական հարադիր բայեր, ինչպես օրինակ՝ «Ու մեզ **բռնել կտա**...: Իսկ իրեն կնշանակեն բարաքի ավագ»:

Հարադրավոր բայերի զգալի մասն ունի համապատասխան համադրական ձևեր, ինչպես՝ միտք անել – մտածել, կանգ առնել – կանգնել, կռիվ անել – կռվել, լող տալ – լողալ, պար գալ-պարել, պատառ-պատառ անել – պատառոտել, իմաց տալ – իմացնել և այլն: Հաճախ հարադրավոր բայերը այլաբերական, փոխաբերական իմաստ են արտահայտում և հանդես են գալիս որպես դարձվածային միավորներ, ինչպես՝ ականջ դնել, խելքից հանել, երես առնել, սիրտ տալ, ականջի ետևը գցել, գլխի ընկնել, աչքով տալ, աչքը մտնել, ձեռք առնել և այլն:

Հարադիր բայերը հայերենի լեզվամտածողության ազգային բնույթը պայմանավորող լեզվական կարևոր միավորներ են և առավել ցայտունորեն արտացոլում են մեր ժողովրդի պատկերավոր արտահայտվելու անսպառ կարողությունները: Պետք է նաև նշել, որ հարադրությունների զգալի մասը,

մասնավորապես բայական, անցնելով հարյուրավոր սերունդների բովով, ստացել է դարձվածաբանական արժեք:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ : ՀԱՐԱԴԻՐ ԲԱՅԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ԴԱՍԱՐԱՆ՝ 7-րդ

ԹԵՄԱ՝ Հարադիր բայեր

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝

1. Ձեռք բերել, յուրացնել և ընդլայնել բառակազմական գիտելիքները։
2. Զևավորել տրամաբանական, վերլուծական և քննադատական մտածողությունը։
3. Զարգացնել համագործակցային հմտությունները։

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

1. Տարբեր խոսքի մասերից կազմի հարադրավոր բարդություններ։
2. Տեքստում գտնի հարադիր բայերը և դրանք ճիշտ կիրառի խոսքում։
3. Տարբերակի կազմությամբ տարբեր բայերը և համեմատի՝ նշելով ընդհանրություններն ու տարբերությունները։
4. Տիրապետի հարադրավոր բարդությունների ուղղագրությանը։

ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝

փոխներգործման կամ ինտերակտիվ, մտագրոհ (հենակետային հարցեր), խմբային հետազոտություններ, վարժություններ:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Խթանման փուլ

Այս փուլում կիրառում ենք հենակետային հարցեր՝ աշակերտների բառակազմական գիտելիքները ստուգելու նպատակով.

1. Ի՞նչ միջոցներով ենք նոր բառեր կազմում։
2. Բառակազմական ի՞նչ եղանակներ կան։
3. Բառակազմական ո՞ր եղանակն է բառաստեղծման համար առավել լայն հնարավորություններ ընձեռում։

4. Ի՞նչ է հարադրավոր բարդությունը, և ո՞րն է նրա կաղապարը:

5. Որո՞նք են բայական ու անվանական հարադրությունների տարբերությունները:

Իմաստի ընկալման փուլ

Փորձում ենք աշակերտների օգնությամբ ու ուսուցչի ուղղորդությամբ կազմել վերլուծական բարդությունների տեսակները ներկայացնող մի աղյուսակ, ինչպես օրինակ՝

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Վերլուծական են համարվում այն բարդությունները, որոնց բաղադրիչները հանդես են գալիս անկաղապար, վերլուծական եղանակով, ունեն մեկ գլխավոր բառային շեշտ և գիտակցվում են իբրև բառային մեկ միավոր, ինչպես՝ տեսակ-տեսակ, տխուր-տրտում, դես-դեն, գիշեր-ցերեկ, թույլ տալ, հանդես գալ, խաղ ու պար, առ և տուր և այլն: Վերլուծական բարդությունները լինում են երեք տեսակ՝ կրկնավոր, հարադրական և հատվածական [8]:		
ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (անվանական և բայական)	ԿՐԿՆԱՎՈՐ	ՀԱՏՎԱԾԱԿԱՆ
աղմուկ-աղաղակ բուք-բորան արյուն-քրտինք երեսուն–քառասուն կարմիր-կանաչ գործ անել ծազ տալ զրույց անել գլխի ընկնել ձեռք առնել գնալ-գալ կտրել-դեն գցել	գույն-գույն դասարան-դասարան փունջ-փունջ մեծ-մեծ մեկ-մեկ քանի–քանի մանր-մանր ուշ-ուշ առոք-փառոք մանր-մունր ոլոր–մոլոր ման-չման	ռազմական -քաղաքական գիտական -հանրամատչելի ռազմական – ծովային ռազմական –օդային պատմական – բանասիրականծ նյութական -տեխնիկական մանկական -պատանեկան բարոյական-քաղաքական դատական - քննչական տեխնիկական -տնտեսական ռազմական -հեղափոխական

		բարոյական - կամային

Նպատակահարմար է վերլուծական բարդությունների ուսուցման գործընթացը կազմակերպել փոխներգործման մեթոդով՝ դասարանի աշակերտներին բաժանելով չորս խմբի: Խմբերից յուրաքանչյուրին ուսուցիչը հանձնարարում է ուսումնասիրել հարադրավոր բայերը: Աշխատանքի ընթացքում բոլոր խմբերն օգտվում են դասագրքի՝ իրենց հանձնարարված նյութի համապատասխան բաժնից: Անհրաժեշտության դեպքում ուսուցիչը նյութեր է տրամադրում:

Առաջին առաջադրանքը կատարելիս նախ պետք է համառոտ ներկայացնել վերլուծական բարդությունների տեսակների կազմության առանձնահատկությունները:

Հարադրական են այն բարդությունները, որոնք կազմված են մեկից ավելի բաղադրիչներից և գրվում են անջատաբար:

Հարադրությունները լինում են անվանական և բայական:

Անվանական հարադրական բարդություններ են կոչվում որևէ անուն խոսքի մասի պատկանող տարբեր բառերի հարադրությամբ կազմված բարդությունները [9]:

Անվանական հարադրական բարդություններ կարող են կազմվել նյութական իմաստ արտահայտող գրեթե բոլոր խոսքի մասերով, հատկապես այնպիսի բառերով, որոնք իրար հետ կապված են ինչ-ինչ կողմերով և իրար հետ առնչվող երևույթներ, իրողություններ և հատկանիշներ են ցույց տալիս: Անվանական հարադրություններ կարող են կազմվել հոմանիշ, հականիշ և իրար հետ իմաստով առնչակից բառերով, ինչպես՝ աղմուկ-աղաղակ, կոշտ-կոպիտ, բուք-բորան (հոմ.), գիշեր-ցերեկ, ներս-դուրս, հեռու-մոտիկ (հակ.) թև-թիկունք, աչք-ունք, տուն-տեղ, քիթ-մռութ, դուռ-դրկից, հինգ-վեց, զենք-զրահ և այլն:

Հարադրական բարդություններ են կազմվում նաև թվականների, մակբայների, մասամբ նաև շաղկապների և եղանակավորող բառերի հարադրությամբ, ինչպես՝ երկու-երեք, հազար ու մեկ, ետ ու առաջ, դես ու դեն, վեր ու վար, ապա թե ոչ, միայն թե, կարծես թե, ինչպես որ, ասես թե, մանավանդ որ և այլն:

Նմուշ-օրինակ՝

	ԳՈՅԱԿԱՆ	ԱԾԱԿԱՆ	ԹՎԱԿԱՆ	ԴԵՐԱՆՈՒՆ	ՄԱԿԲԱՅ	ՇԱՂԿԱՊ
Շաղկապներով	կերուխում առնտուր վար ու ցանք օր ու գիշեր	լուռ ու մունջ ծանր ու թեթև	-	այս ու այն	վերուվար	
Միության գծիկով	ձյուն-ձմեռ վագոն-ռեստորան	կարմիր-կանաչ լավ-վատ	երեսուն-քառասուն երկու-երեք	ինչ-որ	հրով-սրով	
Առանց միության գծիկի	թել պանիր	ավելի մեծ	մեկ երրորդ	ոչ մի	տնից տուն	ինչ որ

Հաջորդ առաջադրանքը վերաբերում է բայական հարադրություններին: Նախ պետք է համառոտ ներկայացնել բարդությունների նշված տեսակի առանձնահատկությունները: Բայական հարադրությունները կազմվում են որևէ գոյականով, մակբայով և մեկ բայի կապակցությամբ, ինչպես նաև երկու բայերի զուգադրությամբ, որոնք ունեն բառային առանձին իմաստ և մեկ ընդհանուր շեշտ: Բայական հարադրությունները հիմնականում[10]: բաժանվում են երեք խմբի.ա) Բարդություններ, որոնք կազմված են որևէ հարադրից (գոյական կամ մակբայ) ու բայից և ըմբռնվում են որպես գործողության ընդհանուր նշանակություն արտահայտող ինքնուրույն բայական միավորներ, ինչպես՝ միտք անել, գլխի ընկնել, դուրս տալ, հանդես բերել, կանգ առնել և այլն: Այս կարգի բարդությունները կոչվում են հարադիր բայեր:

բ) Բարդություններ, որոնք կազմված են երկու և ավելի բայերից և արտահայտում են իրար հետ սերտորեն կապված գործողություններ մի ընդհանուր նշանակությամբ և կոչվում են զուգադրական բայեր, ինչպես՝ բռնել-բերել, ելնել-կանգնել, ուտել-խմել և այլն: գ) Բարդություններ, որոնք կազմված են անորոշ դերբայից և տալ բայից և միասնաբար արտահայտում են պատճառականություն: Այսպես են կազմվում պատճառական ձևերի այն բայերը, որոնք սովորաբար

պատճառական ածանցներ չեն ստանում, ինչպես՝ ազատել տալ, բերել տալ, գողանալ տալ, փորել տալ և այլն: Այս խմբի բարդությունները կոչվում են պատճառական հարադիր բայեր:Հարադրավոր բայերի զգալի մասն ունի համապատասխան համադրական ձևեր, ինչպես՝ միտք անել – մտածել, կանգ առնել – կանգնել, կռիվ անել – կռվել, լող տալ – լողալ, պար գալ-պարել, պատառ-պատառ անել – պատառոտել, իմաց տալ – իմացնել և այլն: Հաճախ հարադրավոր բայերը այլաբերական, փոխաբերական իմաստ են արտահայտում և հանդես են գալիս որպես դարձվածային միավորներ, ինչպես՝ ականջ դնել, խելքից հանել, երես առնել, սիրտ տալ, ականջի ետևը գցել, գլխի ընկնել, աչքով տալ, աչքը մտնել, ձեռք առնել և այլն: Աշակերտներին հանձնարարվում է բայական հարադրություններ կազմել նշված բայերով, ինչպես օրինակ՝

ԳԱԼ	մոտ գալ պար գալ շուռ գալ	մոտենալ պարել շրջվել
ԱՆԵԼ	զրույց անել գործ անել միտք անել	զրուցել գործել, աշխատել մտածել

Նյութերն ուսումնասիրելուց և աշխատանքներն ամբողջացնելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները, քննարկում են առաջադրանքները, կատարելու ընթացքը, առաջացած դժվարությունները, ներկայացնում են իրենց դիտարկումները, անում են շտկումներ, առաջարկներ: Ամեն խումբ ներկայացնում է իր հարցերը և պատասխանում իրեն ուղղված հարցերին: Ուսուցիչը հանձնարարում է կիրառական վարժություններ, տալիս է համապատասխան առաջադրանքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անդրադառնալով հարադիր բայերի ընդհանուր առանձնահատկություններին և անուն խոսքի մասերով հարադրված նրանց կիրառությանը՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Հարադիր բայերը երբեմնի շարահյուսական կապակցություններ են, որոնց կապը հետագայում մթագնում է, և բայն իր լրացումով դառնում է մեկ իմաստ արտահայտող բարդություն, որի մեկ միասնություն լինելու ապացույցներից մեկն էլ մեկ ընդհանուր շեշտ ունենալն է։
2. Հարադիր բայերը ուսումնասիրության նյութ են հատկապես բառակազմության համար։Երկու իրարից տարբեր (և իմաստով տարբեր,և խոսքի մասային պատկանելությամբ)Բառերի հարադրությամբ ձևավորվում է նույն ընդհանուր հատկանիշներով մեկ բարդություն (մեկ իմաստ.խոսքի մասային նույն հատկանիշները)։
3. Հարադիր բայերը բաժանվում են 3 ենթախմբի՝ հարադիր բայեր,զուգաբայեր,պատճառական հարադիր բայեր։ Այս երեք խմբերն էլ ուսումնասիրության առանձին առարկաներ են՝ դրսևորման իրենց առնձնահատկություններով։ Մեր խնդրի առարկան հանդիսանալով առաջին ենթախումբը և նրա ուսուցումը՝ նկատում ենք,որ եթե հարադրավոր բայերի բայական բաղադրիչը մի խոսքի մասի (բայի) պատկանելով՝ ցույց է տալիս որևէ գործողություն կամ եղելություն, ապա հարադիրները, սերելով այլևայլ խոսքի մասերից,տարբեր իմաստային նշանակություններ են արտահայտում և, ըստ այդմ էլ, կազմում տարբեր խմբեր։
4. Հարադրավոր բայերի հարադրի դերում հանդես են գալիս տարբեր խոսքի մասեր.գոյականը, աշականը, դերանունը, թվականը, մակբայը, ձայնարկությունը (այս նույն խոսքի մասերը նաև փոխանվանաբար կիրառությամբ)։
5. Պետք է նշել, որ կան հարադրավոր բայեր, որոնց հարադիրները անկախ բառային գործածություն չունեն և բարդության մեջ հարադրվող բայի համար

որևէ որոշակի շարահյուսական պաշտոն չեն կատարում.կան հարադրավոր բայեր որոնց հարադիրները իրենց անկախաբար գործածվող ձևերն ունեն և բարդության մեջ հարադրվող բայի համար այս կամ այն շարահյուսական պաշտոնն են կատարում։

6. Բնագրային հարուստ օրինակներ ունենալով՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ ամեն գոյականի և ամեն բայի կապակցությունից չէ, որ կարող է կազմվել հարադիր բայ։ Ընդհանուր ուսումնասիրությունից եկել ենք այն եզրակացության, որ որպես հարադիր հանդես են գալիս մեծ մասամբ այնպիսի գոյականներ, որոնք մարմնի կամ որևէ օրգանի մաս են նշանակում բայական են կամ ինչ-որ չափով գործողության իմաստ են պարունակում իրենց մեջ։ Մի մեծ խումբ էլ կազմում են գոյականով հարադրված այնպիսի բայեր, որոնց գոյական բաղադրիչից -ել կամ -ալ մասնիկով կարելի է ստանալ պարզ բայ (օրինակ՝ հարց տալ-հարցնել, լաց լինել-լացել)։
7. Բնագրային հարուստ օրինակներից պարզվում է, որ հաճախադեպը ուղղականի, հայցականի, տրականի, հոլովներով գոյականներով հարադիր բայերն են, իսկ մնացած՝ բացառականով, ներգոյականով գոյականների կիրառությունը ոչ այնքան է հաճախադեպ, որը պայմանավորված է նրանով, որ ոչ բոլոր բայերով է, որ հնարավոր է այդ հոլովներով հարադրական բարդություն կազմել։

Ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է։ Ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորված է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ։ Օրինակ՝ դասարանային ուսուցման կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական ձևը։

Այսինքն՝ աշխատանքի յուրաքանչյուր պահի աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով և առաջադրանքի կամ հանձնարարության համար բոլորին միևնույն ժամաքանակն է տրվում։ Նման տեսակի ուսումնական պարապմունքները կոչվում են խմբային կամ կոլեկտիվ։ Խմբային պարապմունքների ամենակարևոր խնդիրներից մեկն այն է, որ

ուսումնական խմբի անդամների մեծ մասը կարող է հայտնվել պասիվ լսողի դերում: Այս խնդրի հաղթահարման ուղիներից մեկն էլ հենց փոխներգործման կամ ինտերակտիվ մեթոդն է:

Ինտերակտիվ մեթոդի կիրառումը բայական հարադրությունները սովորեցնելիս նպաստում է ուսուցման գործընթացի բարելավմանը, ակտիվացնում և ստեղծագործ է դարձնում սովորողների և դասավանդողների անհատական և խմբային աշխատանքը: Սովորողները հաճույքով են սովորում, ակտիվորեն են մասնակցում դասին և ավելի հեշտ են յուրացնում ինչպես կրտսեր, այնպես էլ միջին և ավագ դպրոցներում: Ինտերակտիվ մեթոդներն ապահովում են այնպիսի բազային հմտությունների և կարողությունների զարգացում, ինչպիսիք են մտածելը, ստեղծագործելը, պրպտելը, ոչ ստանդարտ լուծումներ գտնելը, ինքնուրույն կողմնորոշվելը, հետազոտելը և նպատակաուղղվածությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Իմ կարծիքով, ուսուցման ընթացքումփոխներգործման կամ ինտերակտիվ մեթոդների, միջառարկայական կապերի մշտական և տեղին կիրառումը կօգնի դիմակայել հանրակրթության մարտահրավերներին և բարձրացնել ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը, ապահովել ակնկալվող վերջնարդյունքների իրականացումը: Արդյունքում ուսուցման կազմակերպման այս ձևերը կօգնեն ուսուցչին սովորողների մոտ ձևավորել ակնկալվող կարողունակությունները, որոնք բխում են հանրակրթության հիմնական նպատակներից: Կրթության ժամանակակից համակարգը դասավանդողից և կրթություն իրականացնող մյուս օղակներից պահանջում է ծրագրերի անընդհատ նորացում, թարմացում, կատարելագործում, քանի որ ժամանակի հետ փոխվում են հասարակությունը, կրթության նպատակաուղղվածությունը, տեղի է ունենում տեխնիկական միջոցների նորացում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, հ. 1, Երևան, 1962:

1.1. 2. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:

3. Մանկավարժություն, Երևան, 2007:

4. 9. 10. Ալ.Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1997:

5. 6. Ալ.Մարգարյան., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966:

7. Գ.Մահարի, Ծաղկած փշալարեր, Երևան, 1988:

8. Ա.Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999: